

## ՄԵԼԻՏԻՆԷ ՀԻՆ ՀԱԹԵԱՆՑ ՕՐՈՎ

Փոքր Ասիոյ արեւելեան մասին վրայով ամենաճին ստոյգ տեղեկութիւնները կը քաղենք երկու ազգբիւրներէ — ա — Կեսարիոյ մօտ Կանէչ, այժմ Քիւլթեիէ, առեւտրական դադութի թողած բեւեռադիր անակիտներէն. բ — Ազատէի Մեծն Սարգոն թաղաւորին Ք. Ա. շուրջ 2800 Փոքր Ասիոյ վրայ կատարած արշաւանքէն: Մալաթիոյ պատմութեան համար առաջինը կարելոր է անով որ Կանէչի վաճառականց դադութը դէպի Եփրատ տանող առեւտրական մեծ պողոտայ մը ունէր, որուն ուղեգիծին և կարելոր կայաններուն արձանագրութեան մէկ մասը մեզի հասած է. — Կանէչ, Խախոււմ, Խարանա, Սամուրա, Տիմեղկա, Լուխուպատիա, Տիգարամա, Դելարորդ, «Հիթիթներ»ը, էջ 49: Այս ուղեգիծին համեմատ՝ Մամուլիայի դիրքը մօտաւորապէս կը համապատասխանէ վաղեմի Ծամնդա և արդի Արիզիտ աւանի դիրքին: Իսկ ՏԻԳԱՐԱՄՍՍ՝ պատմագէտներու ընդհ. համազմայր՝ արդի Կիւրին քաղաքն է (ի՞նչ կարենա): Բայց անշուշտ, ճամբան, որ պէտք է դէպի Ասորեստան եւ Բարեւստան շարունակէր, չէր կրնար Կիւրինով վերջացած ըլլալ, հասար Եփրատի վրայ զետանցք մը սլախի ունենար, որ չէր կրնար տարբեր ըլլալ Մալաթիոյ դիրքին մօտ Իդուլիէն:

Արդ, ամենաճին Մալաթիան ներկայացնող Մալդիյայի (այժմ Արսլան թեփէ) պեղումները ցոյց տուած են որ հոն, դեռապի մը ծայրը, փոքր դաշտի մը մէջ, Նորքարային շրջանին սկիզբը՝ կազմուած է մարդկային կարելոր բնակավայր մը եւ այդ աղիւսաչէն բնակութեանց աւերակները տեղւոյն վրայ մնացած ըլլալով եւ հետզհետէ նոր շինուող ու ապա կործանուող շէնքերու հողը իրարու վրայ զիջուելով, արուեստական բլուր մը ձեւացած է այդ տեղ: Այս ելույնիկին վրայ է որ հիմնուած է Ք. Ա. 3.000 եւ 2.500 թուականներուն մէջտեղ՝ ամենաճին քաղաքը: Միւս կողմէն, Ակկադեան Սարգոնի համար կը կարգանք որ Փոքր Ասիոյ վրայ իր յաջող արշաւանքէն ետք՝ այդ բնդարձակ երկրամասին մէջ բազմաթիւ պահականոցներ շինեց՝ առեւտրական պողոտաներու վրայ հսկելու պաշտօնով: Ուրեմն, ամէն հաւանականութիւն կայ որ ամենաճին Մալաթիոյ Արսլան թեփէի բերդաքաղաքը շինողն էր Ակկադեան Մեծն Սարգոն, որովհետեւ շինութեան թուականն ամենայարմար կը հանդիպի իր փամանակին:

Ակկադի մեծ աշխարհակալ Սարգոնի թոռնորդւոյն՝ Նարամսինի բերդեղեայ մէկ բաժակը գտնուած է Ամիդա (Տիարպեքիբ): Իսկ անկէ դէպի ա-

բեկը Ֆարգինի (Հին Տիգրանակերտի) մօտ ապարատի մը վրայ իր պատկերը կայ քանդակուած. նոյնպէս Ֆարգինի մօտերը դտնուած եւ այժմ Իսթամպուլի թանգարանին մէջ պահուող կոթողի մը վրայ ալ Նարամսինի ցածաքանդակ մէկ պատկերը կայ, եւ անոր ընկերացող սեպագիր արձանագրութեան կ'իմացուի թէ Ակիագի այս թագաւորը Հոն պալատ մը կառուցանել տուած է հաւանօրէն իրը ամառանոց:

Իէպի Փոքր Ասիոյ կեդրոնը Նարամսինի արշաւանաց մէկ պատմութիւնն ալ գտնուած է Պողադ-Քէօյի հաթերէն պնակիտներէն: Հոն կը յիշուի թէ Բարեւացի թագաւորին դէմ արեւմտեան Ասիոյ ազգերէն տասնեօթը արքաներու զինակցութիւն մը կազմուած էր. որով Նարամսինի համար երեք արշաւանք ընել պէտք եղած է, մինչեւ որ զինակցութիւնը խորտակուեցաւ եւ դաշնակիցները ստիպուեցան հաշտութիւն ընքել Ակիագի յաղթական թագաւորին հետ եւ անոր հարկեր վրիչել:

Փոքր Ասիոյ վրայ Նարամսինի այդ արշաւանքները սա տեսակէտէն նշանակալից են մեր պատմութեան համար. Նարամսինի նախորդը Մարդոն իր դէպի Անատոլու արշաւանքները կատարած էր սկզբնապէս Սամնասի կիրճերուն եւ Կիլիկիոյ ճամբով. Նարամսին ալ իր առաջին երկու արշաւանքները միեւնոյն ճամբով կատարեց, բայց երբ տեսաւ թէ այս ուղիով իրեն կարելի պիտի չըլլայ վճռական յաղթանակ մը շահիլ, նոր ճամբայ մը ընտրեց հիւսիսային գաւառներու վրայէն, այսինքն, ինչպէս իր արձանագրութեան մէջ կը կարդանք, Սուրարտուէն (Միջագետք) արշաւեց մինչեւ Ամիդա, եւ անկէ Խարբերդ-Մալաթիա ճամբով անցաւ. Եփրատը եւ քալեց ուղղակի Փոքր Ասիոյ սրտին վրայ:

Հաւանօրէն նա իր այս քաջագործութեան կ'ակնարկէ Քաղզէացուոց Ուր քաղաքը դտնուած մէկ արձանագրութեան հետեւեալ տողերովը. «...այս արշաւանքը՝ որուն թագաւորներու մէջ ոչ մէկ թագաւոր ձեռնարկած էր, Նարամսին, Ագատէի արքան, կատարեց: Եւ Ինինի (Իշտար) զիցուհին անոր մըրցորդ մը չտուաւ: Սուրարտուի տանուաւորները՝ Պառնազի եւ Բարձրաւանդակի (կամ Լեոնաշխարհի) իշխանները իրենց հարկերը բերին անոր առջեւ»: Հոս Լեոնաշխարհ կամ քարճրաւանդակ բառով անշուշտ Հայաստանը կը հասկըցուի, եւ Տիգրանակերտի շրջանին մէջ Նարամսինի դոնէ երեք յիշատակարան թողած ըլլալէն եւ պալատ մը շինել տալէն յայտնի է թէ նա ո՛րքան կարեւորութիւն կու տար Խարբերդ-Մալաթիա դժով Փոքր Ասիա տանող այս ճանապարհին, որուն Միջագետային բանալին էր Տիգրիսի վրայ Ամիդա քաղաքը, իսկ Անատոլեան բանալին՝ Եփրատի վրայ Մալաթիա բերդը:

Նարամսինի դէմ պատերազմող 17 զինակից թագաւորներու ցանկին մէջ (զոր տես Ն. Ադանց, «Պատմութիւն Հայաստանի» Փր. էջ 209) հիշուողներն է Սատտիններու արքայ Պամբա, վեցերորդը՝ Կանէլի արքայ Զիպանի: Անկարելի չէ որ ցանկին մէջ յիշուած արքաներէն մէկն ալ Մալաթիոյ կողմինն ըլլայ: Հոս յիշուող «ԽՍՏԻ» արքայ Պամբա, ըստ պատմագիտաց Նախաեաքերու թագաւորն է: Անոր ժամանակէն ետք եկան բուն Հնդկերոսական Խնտացիք կամ Հաք-Խաւէ, որ հետզհետէ դորանալով Փոքր Ասիոյ ամբողջ կեդրոնական ու հարաւային մասերը դրակցին, եւ ապա իրենց Մալաթիա Ա. թագաւորը Ք. Ա. 1780-ի առեկները Հիւսիսային Սուրիոյ վրայ յարձակելով Հալէպը նուաճեց, վերջն ալ մինչեւ Բաբելոն մեծ արշաւանք մը ըրաւ: Բայց այս Հին շրջանին՝ Խնտացուոց Մալաթիոյ կողմերուն հետ ոեւէ չգիտան մէջ դրուուելը յիշուած չէ:

Այլ ժամանակ Քերթուքի եւ Մուսուլի կողմերէն մինչեւ Միջերկրական ծով բոլոր հիւսիսային Միջագետքն ու Սուրիան բռնած էր Հուրրի անուանեալ մեծ ժողովուրդը, որուն հետ նախ սաստիկ ընդհարումներ ունեցաւ Հաթեանց վերոյիշեալ Մուսուլիս Ա. մեծ արքան, եւ յետոյ զինակցեցաւ Բարեւոնի վրայ իր կառարած արշաւանքին համար: Հալէպ ալ այն ատեն Հուրրիներու ձեռքն էր: Հուրրիներու պետութիւնը իսկապէս կամ իսանկապառ կը կոչուէր, որ կը տարածուէր նաեւ վերին Տիգրիսի ավազանէն բաղկացեալ հարաւային կամ ստորին Հայաստանի վրայ: Քիչ վերջը կը տեսնենք որ Հուրրիները մինչեւ իսկ արեւելեան կապաղաովկիան զբաւած եւ դէպի Պանատս երկնցած են, Հաթեանց դէպի Սուրիա եւ Միջագետք նստեալ փակելով: Այս կը նշանակէ որ ոչ միայն Կովմագիմէի, այլ նաեւ Մելիտինէի եւ Տեղարամայի (Կիւրիմի) շրջանները Հուրրիներուն ձեռքն անցեր էին: Այսպէս տեւեց իրաց վիճակը մի քանի դար մինչեւ որ Ք. Ա. 1460-ի ատենները Հաթեանց կամ Խեղացոց պետութիւնը վերադարձնուեալ մը ունեցաւ: Այս վերջին ժամանակը Մելիտինէի տնտեսական կողմէն սկսեալ մինչեւ Ապառատուս Կիլիկիա տարածուող կարեւոր թաղաւորութիւն մը ձեւացած էր արդէն, որ կիզգուստեալ կամ կատաւատեալ կը կոչուէր, եւ որուն բնակչութիւնը Հաթեանց եւ Հուրրիներու խառնուրդ մըն էր: Պատմադէտները կը կարծեն թէ կատաւանա կամ կիզգուստա անունէն անանցած պիտի ըլլան այդ երկրամասի դասական կատաւանիա եւ արդի 'Իզգան անունները: Ք. Ա. 1500 թուականէն յետոյ՝ Միտաններէք անուն հնդեւրոպական ժողովուրդ մը Հուրրիները յաղթահարելով եւ սպա անոնց հետ միանալով՝ Խանիւլարտաի պետութեան նոր ձեւ մը տուին: Ուստի այդ պետութեան յաճախ «Հուրրի-Միտանի պետութիւն» անունն ալ կը արուի:

Արդարեւ Խեղացոց մինչեւ անգամ Փոքր Ասիոյ մէջ քիչ մը ատեն դարձեալ եւ մղուեցան Հուրրի-Միտանի պետութեան ծաւալումին երեսն: Հաթեան պետութեան զլխաւոր հակառակորդը դարձող այս նոր տէրութիւնը իր զօրութեան դազաթնակէտին վրայ կը զտնուէր Ք. Ա. ԺԵ. դարու դէպի վերջերը, երբ Խանիւլարտաի երկիրները Արտաստամ Ա. թագաւորին մականին տակ միացած էին: Միտանի թագաւորը իր իշխանութիւնը Եփրատէն արեւմուտք ալ տարածելով նուաճեց հիւսիսային Սուրիան, Կովմագիմէն եւ ապա Տեղարամայի երկիրը — որ կը բովանդակէր Մելիտինէն ալ — եւ իրեն հարկատու դաշնակից ըրաւ կիզգուստայի թագաւորը:

Այս ժամանակ Խեղացոց մեծ թագաւորն էր Արնուանդուս Ա. ի որդին Պատաուսի Բ. (իրբ 1425—1410 Ք.Ա.): Իրենց հարաւարեւելեան սահմանին վրայ Միտանեցոց պէս զօրուոր ու ռազմասէր տէրութեան մը հաստատուելուն անշուշտ քնաւ չէր կրնար հաճելի ըլլալ Խեղացոց, ոչ ալ Եփրատսի հետ անոր բարեկամ-զինակից ըլլալը: Մայր արդէն արեւմտեան Հայաստանի մէջ ալ կազմուած էր հայասա կամ Հայասա անուն կարեւոր պետութիւն մը, որ Փոքր Հայքէն գոնէ մինչեւ Վանայ ծովը կը տարածուէր: Այնտեղեան սուկայի սրայ-Քար մը սկսաւ երեք մեծ պետութեանց միջեւ, որոնց ընդհարումներուն զրոյսար ասպարէզն էր Տիգարամա-Մելիտինէի գաւառները, ինչպէս նաեւ անոնց դիմացը՝ Եփրատի արեւելեան կողմը տարածուող Իշուլիա կամ Իսուս երկիրը (Խարբերդ-Արգնի շրջանակը):

Պատաուսի Բ. ի որդւոյն ու յաջորդին՝ Դուսիսալիյաս Գ. ի օրով (1410—1399 Ք. Ա.), երբ ատեն մը ներքին երկպառակութիւն կը տիրէր Հուրրի-Միտանի պետութեան մէջ, Հաթեանց նուաճեցին մինչեւ Եփրատի աջ եզերքը տարածուող բոլոր փոքր-ստիական գաւառները եւ բնդհարման եկան Հայաս-

սայի պետութեան հետ, որուն զինակից էին Պոնտոսի երկրին Քառփաներ ա-  
նուն հօր բարբարոս ցեղերը:

Գուրխալիաս Գ. իր համանուն մէկ սրղին իրեն դահակից ըրաւ (Ք. Ա.  
1105-ի տակնները)՝ բայց Սուրբիլուլիումա անուն ուրիշ մէկ սրղին, ինքն ու-  
զելով հօրը դահակիցն ըլլալ, դաւադրութիւն մը սարքեց իր հորօրը դէմ, զայն  
սպաննել տուաւ եւ հասաւ իր փափաքին:

Սակայն սմբողջ կայսրութիւնը տակնուվրայ եղաւ ներքին յեղափոխու-  
թեամբ, եւ բոլոր կողմերը ապստամբութիւններ ծագեցան: Փոքր Ասիոյ հիւ-  
սիս-արեւելեան մասերն ալ ապստամբեցան: Այս երկրամասին մէջ Սասանի  
պետութենէն ապստամբած տեղերու ցանկը, մէկ հնադրի մէջ երկու անգամ  
կրկնուած, հետեւեալն է. — «Իշուվայի երկիրը թշնամացաւ: Սասանի հպա-  
տակ մարդիկ ալ Իշուվայի կողմը բռնեցին այսինքն՝ Գուրտալիասի մարդիկը,  
Արաւաննայի մարդիկը, Չաղչայի (կամ Չաղիչայի) դաւառը, Կալամաշմայի  
(երկրորդ ցանկին մէջ անճշդօրէն Տիզարամայի) մարդիկը, Տիմինայի դա-  
ւառը, Հալիւայի լեռնագաւառը, Կարնայի լեռնագաւառը, Տուրմիտայի մար-  
դիկը, Ալիսայի դաւառը, Խուրմայի դաւառը, Խարանայի լեռնագաւառը,  
Տեղարամայի երկրին կէսը, Տիպուրդիայի մարդիկը, Խասքայի մարդիկը, Ար-  
մանայի մարդիկը»: (1)

Հոս «մարդիկը» ըսելով թերեւս դեռ կատարելապէս հաստատարնակ  
վիճակ չառած ցեղեր պիտի հասկնանք, եւ ուրիշ արձանագրութիւններէ կ'ի-  
մանանք որ այս ցեղերը Գասգայի ծագում ունէին, բայց Խեաացուց պետու-  
թեան յարած էին եւ անոնց կը ծառայէին իրենց զինուորներով իբրեւ վարձ-  
կան: Իսկ հոս իբրեւ «երկիր» կամ «դաւառ» յիշուածներն ալ կ'երեւի թէ նա-  
խապէս ոչ թէ Հաթեան, այլ Հուրրիական էին: Այս ցեղերու եւ դաւառներու  
տեղերը մանրամասնօրէն ճշգրէ մեր նպատակէն դուրս է, այլ միայն կը բա-  
ւախանանք ըսելով թէ անոնք կը դաժնուէին Իսիս (Գայլ գետ) եւ Ալիս դե-  
տերու վերին աւազաններէն սկսեալ մինչեւ Մալաթիա եւ Ալալիսթան՝ Եփրատի  
արեւմտեան կողմը ստորածուղ լեռնադաշտերու վրայ: Բայց ցանկիս մէջ ա-  
մենակարեւոր անունը Տիզարաման է, որ կը նշանակէ միանգամայն թէ՛ ըն-  
դարձակ նահանգ մը, որ անշուշտ Միլիտիէն ալ կը բովանդակէր, եւ թէ անոր  
կեդրոնական քաղաքը, զոր պատմագէտք իրաւամբ կը նշանակեն դասական  
կորենա եւ արդի Կիւրին քաղաքին հետ: Թէ Միլիտիէն ալ կը բովան-  
դակուէր Տիզարամա նահանգին մէջ, կը հետեւի անկէ որ Տիզարամա աշ-  
խարհն անմիջական դրացին էր Իշուվայի, որ կը նշանակուի Խարբրդի կող-  
մերուն հետ, որովհետեւ Խաթեան արձանագրութիւն մը կ'ըսէ. «Բայց եկաւ  
Իշուվացի քշնամին տերեց Տեղարամա քաղաքի աշխարհը»: Թէ՛ն այս Ժա-  
մանակի արձանագրութեանց մէջ Միլիդ քաղաքի անունը չի յիշուիր, բայց  
ասկէ չի հետեւիր թէ Միլիդ այդ տանը գոյութիւն չունէր, այլ միայն թէ  
տակաւին նահանգի կեդրոն եղած չէր:

Տեղը չէ հոս Հաթեան կայսրութեան եւ Հայասայի պետութեան միջեւ  
մղուած դարաւոր պատերազմներու մանրամասնութեանց մէջ մտնելու, զորս  
սրղին ընդարձակօրէն պատմած ենք մեր «ՆԱՅԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»  
գիրքին մէջ (Ե. եւ Ը. դրոշմներ): Միայն կը լուսէ թէ Սուրբիլուլիումա, որ  
ներքին բոլոր ապստամբութիւնները մարելէ ետքը՝ սոսկալի արշաւանքով մը

(1) Delaporte, «Les Hittites», p. 78.

N. Adontz, «Histoire d'Arménie», p. 41-2.

խոնարհեցուց Հուրրի-Միտանի պետութիւնը, եւ անոր որդին՝ Մուրսիլիս Բ. Հաթեան մեծ արքան, որ վերջնական մահացու հարուածը տուաւ Հայաստանի կամ Աղղիի պետութեան, երկուքն ալ երբ պատերազմի համար Եփրատի արեւելքը կ'արշաւեն՝ Իշուվա երկիրն իբրեւ ճանապարհ դործածելով ամէն անդամին ալ Մալաթիոյ մօտ անցած պիտի ըլլան զեաք:

Հաթեան մեծ կայսրութեան վերջին դարուն Մալաթիայ եւ Կիւրինի շրջանակները հեռագիտեալ աւելի կարեւորութիւն կը ստանան քաղաքական տեսակետով: Հաթեանք նորանոր քաղաքներ կը հիմնեն այս կողմերը եւ անոնց մէջ խեթացի դադթականներ կը հաստատեն: Երբ Մուրսիլիս Բ.ին յաջորդեց իր որդին Մուվսատալիս (Բ.Ա. 1320—1290), ասիկա իր Խատտուլիս եղբայրը սպայակոյսային պետ եւ դիւսուսը մատուակապեալ կը կարգէ: Այս միջոցին 'Հաթեան դժգոհ արքայազունի մը սաղրանօք՝ Գասգաներ յանկարծ մեծ ապստամբութիւն մը կը հանեն եւ պետութեան արեւելեան մեծ մասը կ'ասպատակեն մինչեւ Կանէշ քաղաքը: Խատտուսիլ եօթնամեայ պատերազմով մը վերջապէս կը կտրէ Գասգաներու ոյժը եւ զանոնք Հաթեան տէրութեան կը հնազանդեցնէ: Ինչքէ կը ստանայ «Հակմիսայի (կամ Հակրիսայի) փոխարքայ» տիտղոսը եւ իր վարչութեան շրջանակը կը բովանդակէ ամբողջ Պոնտոսի երկրէն զտտ, Փոքր Հայքի եւ արեւելեան Կասպագաւկիայ ընդարձակ գաւառները, որոնք այն ատեն «Վերին Աշխարհ» կամ «Վերին Ատուա» անունով ծանօթ էին:

## ՄԵԼԻՏԻՆԷ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՆԱՀԱՆԳ

Տարխունագիի գերեզարութենէն ետք, բուն Մելիտինէի Թագաւորութիւնը կործանեցաւ, եւ երկրին մէկ մասը Մելիդու քաղաքին հետ շնորհուցաւ Կոմմաղիսի Մաւսաղու Թագաւորին, որ Կարգեմիշի նուաճումէն ի վեր ամենազլխաւորը կը համարուէր «խօտաթի» իշխաններուն մէջ: Մնացած մասն ալ խամմաղու երկրին կցուելով եւ Տիւլգարիմու (Կիւրին) յերդաբաղաքը կեդրոն ունենալով, մասնաւոր կառավարչութեան մը վերածուեցաւ:

Կերեւի Սարգոնի մէկ սպարապետը այս միջոցին կեդրոնական Փոքր Ասիան նուաճեց էր մինչեւ Կեսարիայէն շատ անդին: Այսպէս Փոքր Ասիոյ մէջ ստեղծուեցաւ Մարդպանութեան շրջանակ մը ահադին տարածութեամբ, որուն ալ տրուեցաւ Կոմմանու կամ Խամմանու անունը, որովհետեւ նախկին Խամմանու երկիրն ալ անոնց կցուած էր:

«Այդ երկրին — Խամմանուի մարզպանութեան — մէջ 10 ամրոցներ հիմնեցի», կըսէ Սարգոն: «Բնակիչներուն ապահով բնակարաններ հայթայթեցի: Լուխու, Բուրդիք, Ամաւաւ, Կիւրակի, Անդաւաբալիա քաղաքներն Ուրարտուի դէմ իբրեւ պահականոց ամրացուցի: Ուաի, Ուսիանէ, Վարգիմ քաղաքները հիմնեցի Մուշկիներու սահմանադրութիւն վրայ. անոնց կըքի դրոները փակեցի: Սիլիքիք եւ Երմուրարա քաղաքները ..... Ժողովուրդին դէմ ամրացուցի»: (Սարգոնի Տարեգրութիւնք, տողեր 190—194): Արձանագրութիւններէն այնպէս կը մակարերուի թէ Սարգոն շատ ընդարձակ Ասորեստանցի ու Միջագետացի դադթականութիւն մըն ալ բերաւ հաստատեց Խամմանուի մարզպանութեան մէջ:

Գորախտարար դիւրին չէ Սարգոնի ամրացուցած այս տասը քաղաք-

ներուն տեղերը որոշել: Ծորրեր առաջարկած է որոշ նոյնացումներ (տես՝<sup>1</sup>) եւ Պրոֆ. Ադոնց՝ որոշ<sup>(2)</sup> քանի մը քննադատութիւններով կ'ընդունի զանոնք: Արդ, Տիւզարիմա՛ւի նահանգին եւ Կամմանուի մարզպանութեան մէջ ամրացուած տասը Բաղա՛ններուն հիմզը Ուրարտուի դէմ էր, ինչ որ կը ցուցնէ թէ կա՛մ Ուրարտուի համեմատական ոյժը դերակալ էր եւ կա՛մ այս կողմի սահմանագրութիւնը աւելի ընդարձակ ու բաց էր: Ծորրեր կը դիտէ որ Սարգոնի ամրացուցած քաղաքները դետային կամ լեռնային անցքերու վրայ՝ գլխաւոր ճամբաներու հսկող տեղեր էին: Սանտալճեան արդէն այս հինգ քաղաքներէն երեքը — Անուրու, Անդուարսալիա եւ Բուրդիբ — նշանակած է իր քարտէսին վրայ՝ Արեւմտեան Եփրատի աջ ափունքը, Քեպանմատէնէն դէպի Քեմախի դիմացը: Ծորրէր կ'առաջարկէ Բուրդիբը նոյնացնել Զիմարայէն 7 քիլոմէթր հարաւ-արեւմուտք Փալքէյլլու դիւղին հետ: Ն. Ադոնց այս նոյնացման կ'առարկէ, բայց ըստ մեզ՝ անտեղի է առարկութիւնը: Անմարու Քեպանմատէնի դիմացը Նամերլի կամ Էնմերլի դիւղին հետ կը նոյնացուի, եւ Կիակի շատ Իրաւամբ կրնայ համեմատուիլ Քեքանմատէնի քիչ մը վարօք՝ Եփրատի աջ ափին վրայ հին Կիակա բերդաքաղաքին (այժմու Զերմուկ դիւղը) հետ, որ հռովմէական ժամանակներուն լեղէննի մը կայանն էր: Ծորրէր կ'ըսէ թէ Լուխզու կրնայ Տիւզրիկէն դէպի Զարա ճամբուն վրայ ըլլալ. սակաւ առարկելի է, որովհետեւ ինքը այդ ճամբուն վրայ կը զննէ արդէն Ելլիբիբ եւ Շին-դարարա տեղերը. իմ կարծիքովս՝ Լուխզու նոյն է Կաննչեան առեւտուրի, պողոտային վրայ Լուխուզատիա կայանին հետ (Դելարորդ, «Հիթիթներ»ը, էջ 49) որ Կիւրիսի եւ Մալաքիոյ միջեւ տեղ մը պիտի ըլլայ: Ծորրէր կը կարծէ թէ Անդուարսալիա արդի Իզմիլի դիմացն էր. սա ալ առարկելի է, որովհետեւ այդ տեղը Մալաթիոյ շրջանակին մէջ կ'իյնայ: Ըստ իս՝ Անդուարսալիս պէտք է համեմատել հռովմէական դիմադրական ուղեգրութեանց յիշած Տեմ-կիլա կամ Տեմսիքա կայանին հետ, որուն զիրքը մօտաւորապէս Ակնայ (արդի Ելիսի) գիւղին կը համապատասխանէ:<sup>(3)</sup>

Ըստ Ծորրէրի՝ Մուշկիներու դէմ ամրացուած քաղաքներէն Ուսի հաւասար է Շուսայի՝ Գարսուէրայի եւ Տիւանայի մէջտեղ, այժմ Պարֆիլլիլի՛ Գըզըլլըմազ թափուող Թաթլար-Սու դետակի ալանց վրայ. Ուսիանու (Օսանա), այժմ Թուղքէոյ՝ Թաթլար-Սուի դետախառնուքին վրայ: Ծորրէր եւ Ադոնց Վարդինի գիրքն անորոշ կը ձգեն, բայց ըստ մեզ՝ դասական Եւազինա եւ արդի Կէօնէ աւանին հետ պէտք է նոյնացնել, որ Եողդատէն դէպի արեւելք տանող մեծ պողոտային երկճիւղած տեղն է: Այս կը ցուցնէ որ Խամմանու ընդարձակ Մարզպանութիւնը Ալիւսի մեծ աղեղին ներսի կողմէն ալ խոշոր մաս մը կը բովանդակէր: Այս երեք բերդաքաղաքներու դիրքը փաստ մըն է որ Սարգոն Մուշկիներու եւ Սպիտակ Ասորւոց երկիրներէն մէյմէկ մասը կտրեր է Փոխուլիայէն. որով Կիլիկեան դռներէն մինչեւ Սինոպ երկարող առեւտրական պողոտային տէր ըլլալ կ'ուզէ Ասորեստան: Ուրեմն Խամմանու բռնած մարզպանութիւնը ահադին տարածութիւն ստացած է: Այսպէս, Սարգոնի զօրութիւնը հասած է մինչեւ Փոքր Ասիոյ սիրտը. սակայն քիչ յետոյ պիտի տեսնենք թէ նորահաս Կիմմերեան ոյժերը սահման կը զնեն անոր առջեւ ու Ասորեստանը յետ ընկրկման կը ստիպեն:

(1) Forrer E., 'Die Provinzial-Einteilung des Assyrischen Reiches', pp. 75 - 6.

(2) N. Adontz, 'Histoire d'Arménie', pp. 118 - 314.

(3) Ramsay, 'Hist. Geog. of As. Minor', p. 275 and Mopopp. p. 266.

Փորրէր կասկա բառով կ'ուզէ լրացնել Սարգսնի Տարեգրութեանց սող 194 պակտող անունը. ես խորհած եմ որ թերեւս Գիմարքա (Կիմմերեանք) բառն աւելի հաւանական է. բայց կարելի է որ մեզի համար երկուքն ալ աւելի շահեկան անուն մըն է հոս եղծուածը: Ըստ Փորրէրի Երևանքարա արդի Սիմջարն է Տիվրիկէն քէչ մը դէպի արեւմուտք, Չարայի ճամբուն վրայ. իսկ Ելիքի արդի իտալուր անուն աւերակն է՝ Մալաթիայէ Սերաստիա ճամբուն վրայ: Այս երկու նոյնացումներն ալ հաւանական են:

Այսպէս, Կամմանու կամ Կամմանու մարզպանութեան մեզի համար կարեւոր մասը, Տիւգարիմմէի (Կիւրիմի) նահանգը, հարաւէն կը սահմանուէր Վօտարապալէս Տարեմտէէ սկսեալ Թոխմա-Սոււվ, արեւելէն՝ Եփրատ գետով, հիւսիսէն՝ Չալքա Ըրմագ գետով եւ արեւմուտէն՝ Գըզըլ Ըրմագի վերին ընթացքով Եսեղըզլայէն մինչեւ Կէմէրէֆ: Փորրէր ինքն ալ կ'ընդունի թէ Տիւրիկ, Ակն եւ Արաքիի մէջն էին Տիւգարիմմու նահանգին: Այս երկիրը յաջորդող յետոյն վաքսուն տարիներուն մէջ մեր ուշադրութիւնը շատ պիտի գրաւէ Հայոց ազգի ծագման խնդրի վերաբերմամբ:

Ք. Ա. 709-ին Սարգսնի զօրապետներէն Կուէի (Գաշտային Կիլիկիա) կուսակալը Կալիկադոնոսի հովիտն է վար արշաւանք մը ըրաւ. եւ դժուարին դաւառներ կտրել անցնելէն ետք, հասաւ մինչեւ Պիտիդիոյ լճաշատ երկիրը, որ Փոխուրիոյ Թագաւորութեան հարաւային մասը կը կաղմէր: Ասորեստանի Թագաւորն իր զօրավարին այս յաղթութեան կը վերադէ միեւնոյն տարուան մէջ Մուշկեցի Միտայի (Փոխուրիոյ Միդաս Գ. Թագաւորին) իրեն հպատակութիւն առաջարկելը: Բայց դուցէ ուրիշ շարժումի՞ մըն ալ կար անոր մէջ:

Երբ այսպէս, Կամմանու կամ Կամմանու մարզպանութեան կազմութեան նշն երկու երեք տարի վերջը, «Մուշկի Միտան» հարկ կը դէս Սսորեստանի հետ հաշտուելու եւ անոր Թեւարկող զինակցութիւնը խնդրելու, որո՞ւ դէմ էր այս: Հարկաւ ճիշդ այդ միջոցին (Ք. Ա. 710) Թրակիայէն մեկնող եւ Փոքր Ասիոյ վրայ խուժող նորահաս ազէտին, Կիմմեր-Տրեքներու արշաւանքին դէմ պաշտպանուելու համար: Սարգսն կը բարեհաճի այս առաջարկը նկատել իր բեւ հպատակութիւն, ինչ որ Ասորեստանեայց սովորական յոխորտանքն է միշտ: Բայց եւ այնպէս, կ'երեւի թէ Մուշկեցի Միտա, որ է Փոխուրիոյ Միդաս Գ. Թագաւորը, այս հաշտութեամբ իսկապէս կը ստանայ Կամմանու ընդարձակ երկրին ալ իշխանութիւնը փոխանորդաբար:

Տարալուծները Մուշկեցի Միտային հին զինակիցներն էին. սակայն Փոխուրիոյ Թագաւորին այսպէս Ասորեստանի Թեւարկութեան տակ մտնելով Կամմանուի մարզպանութեան ալ տիրանալուն բարկացան, մեզի անձանօթ միջոցով մը զօրացած, դուցէ Ուրարտուի Արդիստիս Բ. Թագաւորին ալ դրդուածով, յանկարծ ոտքի ելան, ապստամբեցան եւ հիւսիս արշաւելով՝ Տիւգարիմմուի նահանգին ալ տիրացան: Այս միջոցին Ուրարտուի Թագաւորն ալ տակաւին իր երկրին հիւսիս-արեւմտեան կողմերը դեղերող Կիմմերեան հորդանները կը ստիպէ Եփրատէն արեւմուտք անցնելով Փոքր Ասիա դիմելու: Ասիկա նոր բարդութիւն մը է արատքոյ կարգի ճշնաժամ մը կը ստեղծէ: Սարգսն, որ Ք. Ա. 707-ին Արդիստիս Բ. ի նիւուէի վրայ արշաւանքին սպանաւորութիւնը ետ կանչուած էր Պարսից ծոցի եզերքէն եւ Բաբելոնի զործիրը կիսաթողով մայրաքաղաք աճապարելու ստիպուած էր, նայն տարուայ աշնան կապաղովկիա կը վաւրայ, եւ առժամն վրկեց Տիւգարիմմուի (Կիւրիմի) նահանգը քարքարոսաց գրաւումէն եւ Տալաւներն ալ ետ դէպի հարաւ հրեց:

Սարգսն յաջորդ տարին Նինուէ անցուց՝ թէ՛ Տիւր-Սարգիինի (արդի

Պորտուգալացի) իր նոր ապարանքի շինութեանը հսկելու, դոր աւարտեց ալ վերջապէս, եւ թէ անհրաժեշտ հանգիստով մը կազդուրուելու: Բայց ահա, Ք. Ա. 705-ին ստիպուեցաւ դարձեալ արշաւել «Կուլլումացի էշպայ» անուն հզօր յեղապետի մը դէմ եւ ճակատամարտին մէջ սպաննուեցաւ: Օլմաթէտ (Աստիքիա 267) կը կարծէ թէ «Կուլլումացի էշպայ» կիմմերացի հրոսապետ մըն էր եւ թէ ճակատամարտը Մարաց երկրի էլլիպ դուռտին մէջ (արդէ Քիրմանշահի մօտերը) տեղի ունեցաւ: Սակայն Ն. Ադանց («Հայաստանի պատմութիւն», էջ 122) Բարեւոնեան ժամանակադրութեան մէկ տուեալին համաձայն կը մատնանշէ, որ ճակատամարտը Տարալի երկրին մէջ պատահեցաւ, եւ մենք ալ հիմա զայս աւելի հաւանական կը դանենք: Փոխելիա, Միդաս Գ.ի կամ անոր յաջորդին՝ Գորդիոս Գ.ի ներքեւ, մեծապէս օգուտած սլոտի ըլլայ Մարգոնի սպանման յառաջ բերած խառնակ կացութենէն: Եւ արդէն Յորդէր, Լէյման-Հաուպտ, Ն. Ադանց եւ ուրիշներ կ'ընդունին թէ (Ք. Ա.) Ը. դարու դէպի վերջերը Փոխելիա յանկարծ մեծ ծաւալում մը ունեցաւ դէպի Եփրատի հովիտը:

\*\*

Հոս հարկ է անդրադառնալ Հայոց ազգի ծաղման խնդրին, որուն վերեւ ակնարկեցինք: Մեր ազգը կրկնակ անուներ ունի՝ Հայ եւ Արմէն, առաջինը բնիկ անուն մը՝ սովորաբար ազգին անհատներուն կողմէ դործածուած. երկրորդը սովորաբար օտարներուն կողմէն կը դործածուի մեր ազգին եւ անոր անհատներուն համար: Ծառ Զանքեր եղած են այս կրկնակ անուներու երեւոյթը բացատրելու համար, մանաւանդ ստուգաբանական ճամբով, բայց մինչեւ հիմա սեւէ դոհացուցիչ արդիւնք չեն տուած այդ փորձերը:

Նորադոյն բեւեռադրական դիւտերը գեղեցիկ կերպով լուսարանել կը թուին այս մութ խնդիրը՝ ցուցնելով թէ մեր ազգը կազմուած է երկու նախնաւորութիւնէ կամ խաւերէ, ինչպէս արդէն կարգ մը օտար եւ ազգային դիտնականներ ենթադրած էին.

ա — Տարբէ մը, որ արդէն Ք. Ա. ԺԵ. դարուն վերջերը մեծ պետութիւն մըն էր՝ դոնէ ամբողջ արեւմտեան Հայաստանը բռնող, Խայասա կամ Հայասա անուն, որ Յետացուց կամ Հաթեանց մեծ կայսրութեան հետ շարունակուեալ աստիճան կարողութիւն ունէր: Հիմա ընդհանրապէս կը խորհուր թէ ազգին բնիկ եւ հարազատ Հայ անունը ժառանգ մնացած է սոյն Հայասայի ժողովուրդէն: Վերջերս ակադեմիկոս Գր. Ղափանցեան ուսուերէն լեզուով 287 էջոց գիրք մը հրատարակած է (Երեւան, 1947), «ՀՍՅՍՍԱ — ՀՍՅԵՐԻ ՕՐՐԱՆ»: Հայասայիք Հայկական Բարձրաւանդակին տիրած են Ուրարտացիներէն դարեր առաջ:

բ — Արմէն տարբէն, որ (Ք. Ա.) է. դարուն նախ մտած կ'երեւի Ուրարտուի սահմաններուն մէջ, եւ Եփրատի արեւմտեան կողմէն դալով: Ուրարտանալի է, որ մինչ հայ տարրին — Հայասացուց — մասին մեր տեղեկութիւնը կը ստանանք Հայաստանէ շատ հեռու տեղէ մը, Փոքր-Ասիոյ կեդրոնական արեւմտեան մարզին մէջ Եփրատի մօտ Պողազէօյէն, ուրկէ պետած են հին Հաթեանց պետութեան արխիւները, միւս կողմէն Արմէն տարրին բնադաւառին մասին, որ բուն Հայաստանի սահմաններէն դուրս կը գտնուէր, մեր տեղեկութիւնը կը ստանանք բնիկ հայ հողին վրայ, Տարօն դաւառին մէջ, Մշոյ մօտ, Թրմերտ գիւղը դանուած բեւեռագիր արձանագրու-



թենէ մը: Բայց ասիկա շատ բնական է՝ հին ժամանակաց պարագաները նկատի առնելով:

Թրմբրտ դիւղի դերեզմանոցին մէջ դանուած այս շահեկան արձանագրութիւնը Ռւբրատուի հին թագաւորներէն Մենուասին կը պատկանի (Ք. Ա. շուրջ 810—785): Կոթողին յետաւողովը, որ ամբողջ ու անեղծ է, լոկ նգովքի բանաձևէ կը բաղկանայ: Յառաջակողովը, որ դժբախտաբար կտորկտոր եղած է, երկու կարեւոր բեկորներէն առաջինին մէջ կը դրուի թէ Մենուաս այդ իր արշաւած երկրին մէջ 400 աւաններ կողոպտելէ ետք, հրոյ ճարակ ըրած է, որոնց շարքին Կուլմէ եւ Եկարաւ բերդաքաղաքները: Միւս կտորին մէջ կ'ըսուի թէ ան ապա Ալաու երկրին վրայ, դէպի Ռւբրատուի ժողովուրդի վրայ արշաւած է. Ալաու երկիրը կործանած, Ռւբրատուի քաղաքի բնակչուութիւնը կտորած եւ Սրմենուի երկիրը նուաճելէ ետք, զայն հողին հաւասարեցուցած է: (1)

Լէյման-Հաուպտ անմիջապէս վճռեց թէ Ռւբրատուի բառը հոս հայ ժողովուրդի Արմենացի անունն կը համապատասխանէ. եւ քանի որ արձանագրական Ուրարտու ձևը Հին Կտակարանի Արարատ երկրին եւ Հերոզոտոսի Ալարատի ժողովուրդին կը համապատասխանէ, լեզուական արդեւէ մը չկայ Ռւբրատուի եւ Արմենի անունները նոյնացնելու:

Բայց ո՞ր է Ռւմէնիուի ժողովուրդին բնակած Ալաու երկիրը: Լէյման-Հաուպտ իսկոյն Փոքր Հայք (Արմենիա Մինոր) երկիրը մատնանշեց իբր այն: Իր մեծ աշխատութեան մէջ կ'ըսէ. «Ռւբրատու (ուլի) տեղանունը կը յիշէ Մենուաս իր դէպի արեւմուտք արշաւանքին առթիւ...: Այս անունը քաղապէս կը համաձայնի Օրմենիացի անունն հետ եւ կրնայ՝ վերոյիշեալ մարտարշաւներու հասողութեան համեմատ բուն Հայաստանի անմիջական մօտաւորութեան մէջ դանուող հանգրուաններէն մէկը նշանակել, այսինքն Ալիւսի սղբերականց վրայ դանուող Արմենիոն լեռը: Ուրեմն Արմէններ (Ք. Ա.) Ը. դարուն սկիզբը հոս կը բնակէին»:

Ռւբրատուի ժողովուրդի բնավայրը Փոքր Հայքի մէջ փնտռելու կարծիքին ես ալ դարձած եմ դիւաւորապէս նկատի առնելով Թրմբրտի արձանագրութեան մէջ Ռւբրատուի անունն յարակցաբար յիշուած «Ռւբրատուի քաղաք» եւ «Ալաու երկիր» անունները: Արդ, Ռւբրատուի բոլորովին նոյն է Օրմէն անունն հետ, զոր Պաղոմէոս աշխարհագիրը կու տայ իբր մէկը Փոքր Հայքի հինգ բաժանումներուն, որուն տեղը կորոշուի արդի Տիվրիկ աւանէն դէպի հիւսիս, եւ որուն կեդրոնն եղող Օրաւ կամ Օրաւեա քաղաքն ալ սլոտի ըլլայ արդի Կուրճենիս դիւղաքաղաքին տեղը: Իսկ Ալաու երկրի անունը՝ հաթեան արձանագրութեանց «Հալիուս լեռներկիր» անունն պէս՝ կրնար Ալիւս (Գըզլլ ըրմագ) դէտի անունն հետ հաղորդակցութեան բերուիլ: Թրմբրտի արձանագրութեան մէջ յիշուած Եկարաւ բերդաքաղաքին անունը համեմատելի է Փոքր Հայքի նշանաւոր Գարսակիս կեդրոնին հետ, որ է արդի Միլիքչերիֆ դիւղաւանը. իսկ արձանագրութեան Կուլմէ բերդաքաղաքին տեղն ալ կարելի է նոյնացնել Կուրճենիսէ դէպի աւելի հիւսիս՝ արդի Բարուտաղը = Բերդաձոր ըսուածին հետ: Ուստի Մենուասի յիշած Ռւբրատուի ժողովուրդին բնակավայրը կը բաղկանար Պոնտական Գայլ դէտի

(1) Lehmann-Haupt, «Corpus Inscriptionum Chaldicorum», No. 32.

N. Adontz, «Histoire d'Arménie», p. 153 - 4.

(2) Armenien einst und jetzt, II, p. 682.

(Գեղեթ, Լիզուս) վերին ընդարձակ առաջունն՝ բովանդակելով թերևս մաս մըն ալ Ալիսի աղբերականց դաւառէն: Ամբողջը խիստ բարեբեր երկիր մըն է այսօր ալ, եւ խիստ բազմամարդ էր հին ժամանակ:

Բայց եւ հաւանական չեմ գտներ որ Ուրարտուի թագաւորն «Ուրմե- նիուխի» ըսուած ժողովուրդին, այսինքն Արմէն տոհմերու բնակած երկրա- մասին ամբողջութիւնը նուաճեց, այլ թէ անոր մինչեւ հիւսիսային Փոքր Հայք՝ զէպի Երզնկա յառաջացեալ հատուածը միայն շօշափեց: Ես կը խորհիմ թէ Արմէն տոհմերու մեծ զանգուածը տակաւին անկէ անդին՝ իր տարածուն բնակութիւնն ունէր Զելայի, հիւսիսային Կոմանայի, Նէո-Կեսարիոյ եւ Սե- րաստիոյ մէջտեղի բարձր հովիտներուն մէջ ու լեռնադաշտերուն վրայ, զո- չուորութեան վիճակի մէջ: Արմէն տոհմերը հոն խաղաղ կը բնակէին բարե- կամ Կասկա ցեղերով շրջապատեալ, եւ ժամանակաւ անոնց Արեշլի մեծ ժո- ղովուրդին զէպի հարաւ՝ Կոմմաղինէ գաղթելով պարապ ձգած երկրամասը գրաւած են:

Արդ, Ք. Ա. 750 թուականի ստեղծները Կիմմերացիք անուն հիւսիսային ժողովուրդը՝ հիւսիս-արեւելքէն յարձակող Սիլիսթացի բարբարոսներէն յաղ- թուած, եւ հարաւային Ռուսիոյ մէջ իրենց բնակավայրերէն արտաքսուած, գաղթեցին հիւսիսային Փոքր Ասիա: Մէկ մասը ուղղակի Խրիմի թերակղզիէն մեկնելով՝ նաւերով Սեւ ծովու վրայէն իջաւ ու դրուեց Սինուպ. երկրորդ մէկ մասը Կովկաս լեռներու վրայէն անցաւ մինչեւ Ուրարտուի հիւսիսային սահմանները եւ ապա սոսոնջ կարեւոր մէկ թաղուկը Սեւ ծովու եզերօք յա- ռաջացաւ մինչեւ Թերմոսոնի բերանը (այժմու Զարշամպա Օւլասը). երրորդ մէկ զանգուածը Դանուբի վրայէն յառաջացաւ մինչեւ Թրակիա, եւ այդ տե- ղէն Տրերներու հզոր ցեղն ալ միասին առած, անցաւ Վոսիսը եւ մտաւ Փոքր Ասիա: Այս վերջին զանգուածները Պոնտոս հատան Ք. Ա. 720 եւ 710 թուա- կաններուն, եւ առաջին զանգուածին հետ միացած՝ սկսան յարձակիլ Փոխ- գիոյ, Սպիտակ Ասորուց եւ այլ երկիրներու վրայ:

Տարակոյս չկայ թէ Պոնտոս բնակող ընդարձակ Կասկա ցեղերը եւ անոնց մէջտեղ բնակող Արմէն տոհմերն ալ, արդէն Ք. Ա. 750—740 թուական- ներէն սկսեալ, իրենց կռնակէն, Սեւ ծովու եզերեայ մասերէն Կիմմերեան նո- րեկ բարբարոսներու յարձակումները կրելով, խախտեցան իրենց տեղերէն եւ մաս առ մաս անցնելով վերին Ալիսի ձորը, զիմեցին զէպի արեւմտեան Եփ- բատի հովիտը: Հոս Մելիտանէէ հիւսիս՝ արդէն Կասկա երկիր էր, որով այս նոր գաղթողները բարի ընդունելութիւն գտան, եւ նորեկներով դորացած ըլլալու արդիւնքն էր թերեւս եւ Կամմանու կամ Խամմանու երկրին Կասկեան ծաղու- մով թագաւորները, Դադիլու եւ Գունդինան, համարձակեցան Ասորեստանի թագաւորներուն զէմ պայքարիլ: Արդէն Ենսէն դերմանացին Գունդինանը նա- խապատմական հաշ թագաւոր մը կը համարէր եւ անունն ալ Կունծիկ հայ անուան հետ կը համեմատէր (տես ՆԱԽ. ՀԱՅԱՍՏ., էջ 455 եւ ծան. 562—4): Եւ նշանակելի է որ Մարաշցիք հայերէն Թաթուլ անունը Թաթիլօ կ'արտասա- նեն, որ այնչափ մօտ կը հնչէ Դադիլու արձանադրական անուան: Ասկէ զատ, հաւանական է որ Խամմանու կամ Տիլ-Գարիմու նախնոցը պաշտպանելու հա- վար Սարգոնի ամբուցուցած Ուրարտական սահմանի ելն քաղաքներէն Անմա- րուն այսպէս յառաջապահ եղած Արմեցիներուն հաստատուած կեդրոններէն մէկն էր նոյնիսկ արեւմտեան Եփրատի վրայ. այսինքն՝ Անմարտ թերեւս Անմարտու կամ Արմարտու հնչուած անուան մը ըստ լողութեան վերաբարտաղ-

բութիւնն է, եւ այսպէս կրնայ Արմաւիր Հայկական տնտան նախածեսն ըլլալ (անդ, էջ 563):

Վերոյիշեալ էջայ Նրոսապեալը, որուն դէմ ճակատամարտին մէջ սպաննուեցաւ Սարգոն, կրնայ կեմմերեան ըլլալ, բայց նոյնչափ եւ աւելի Հասանական է որ Կասկան ու մինչեւ իսկ Արմէն ըլլայ: Արդ, Կալլուսացի կ'ըստի Սարգոնի այս ախօջեանը, եւ Կուլլումա Հաւանօրէն նոյն է Կալլուսէ բերդաքաղաքին Հեա, զոր վերեւ տեսանք իբրեւ Ուրմէնիտիսի երկրին պատկանող կամ անոր մօտակայ տեղ մը: Ասիկա ի՞նչ կը նշանակէ: Ամէն նշաններ կը ցուցնեն թէ երբ Զելա-Սերաստիա շրջանակի լեռնագաւառներուն մէջ վազուց ի վեր թնակող Արմէններու մեծ գանգաւածը վերջապէս ստիպուեցաւ իր տեղէն շարժիլ, մի միակ ուղղութեամբ չգաղթեցին, հապա գոնէ երեք ուղղութեամբ: Մէկ կարծուր բազմութիւն հարաւ-արեւելեան ուղղութեամբ գաղթեց դէպի Կիւրիս եւ Միլիսիսի: Երկրորդ մաս մը գտցէ Կեսարիոյ վրայէն դէպի Հասնոյ կողմերը գաղթեց. բայց անշուշտ երրորդ եւ ամենակարծուր մարմինը ուղղակի արեւելք գաղթեց Երզնկայի եւ Սասաղայի ուղղութեամբ: Բայց հոս երկու դժուարութեան բախեցան: Նախ Ուրարտուի պետութիւնը դեռ չափազանց զօրաւոր էր եւ զիրենք կ'արդիւլէր Վերին Եփրատէն անդին անցնելու. երկրորդ, հոն արդէն Հայաստաններու մէկ հոծ մնացորդը կեդրոնացած կար, եւ աւելի նոր դաղթականներուն զալը երկրին սնունդական կարողութիւնը կը սքաւէր: Հետեւորար, կ'երեւի թէ Կասկա-Արմէն գաղթականները որոշեցին սահմանադրուիլէն հարաւ անցնելով, արշաւել Ասորեստանեայ Հոյատակ նահանգներուն վրայ:

Այսպէս կամ այնպէս, վերջապէս Արմէններու մեծ զանգուած մը Հաստատուած պիտի ըլլայ ներհայիս Ուրարտուայի ըստող ճարակաշատ լեռնաշաւին վրայ, որուն արեւելեան ստորտը կը գտնուի արդի Կիւրիս արաւեր: Ասիկա կեդրոնն էր Տիւ-Փարիմմուի նահանգին, եւ արդի պատմագէտներ միաբան են սա կետիս վրայ թէ այս անունը Ասորեստանեաց կողմէ ստուգարանական ազաւաղում մըն է հիմն Հաթեանց ժամանակի Տիգարամա անուն (ՆԱԼ. ՀԱՅԱՍՏ., էջ 79—89): Առնց, «Հայաստանի պատմութիւն», էջ 35—42), իսկ այս վերջինը աւելի կը կշռէ «Թագաւանայ Թագարմայի Տուն» անունին հետ (ԵՁԵԿ. ԻԷ. 14), որ թէ' Բիւզանդ Փաւստոսի, ուրիշ հին հեղինակներու, թէ' Տելիբի, Բակաղիսի եւ ուրիշ նոր պատմագէտներու կողմէն նոյնացուած է Արմէններու կամ Հայոց Հեա:

Հոս ուրիշ երևոյթ մը մեր ուշադրութիւնը կը դրաւ: Պոնտոսի երկրին մէջ քնակող Կասկա ցեղերը եւ անոնց մէջտեղ տեղաւորուած Արմէն տոհմերը Հաւանօրէն վարժուած էին վայելել Փոխուրիոյ թագաւորին հեռաւոր հովանաւորութիւնը. եւ հիմա երբ Փոխուրիա՝ Սարգոնի սպանումէն եւ անոր Փոքր Ասիոյ մէջ կազմած լայնատարած Խամմանուի մարդկանութեան փլուզումէն օգտուած, դէպի արեւելք կը տարածէր իր ոյժը, մինչեւ Եփրատ հասնելու որոշմամբ, կ'երեւի թէ Կասկաները, բայց մասնաւորապէս Արմէնները սիրով եւ ուրախութեամբ ողջունեցին Փոխուրացոց գալուստը: Իմ կարծիքովս՝ Արմէններու «փոխուրական» ծագման մասին Հերոդոտոսի քով պահուած ականջութիւնը պէտք է այս իմաստով ըմբռնել:

Ուրեմն, Փոքր Ասիոյ մէջ Սարգոնի կազմած ընդարձակ մարդկանութիւնը տասը տարի անգամ չէ տեւած: Այլեւայլ արձանագրութիւններէ մակարեւելի կը դռնենք որ Ասորեստանցիք Միլիսիոյ քաղաքը իր անմիջական

չըջակայքով տակաւին կը պահէին իրենց ձեռքը, բայց քանի որ Ուրարտու, Արգիտտիս Բ.ի ներքեւ, վերստին տիրացած էր Խարրերգի նահանգին<sup>(1)</sup> Ասորեստանցիք՝ Մարաթիա հասնելու համար ստիպուած էին Կաւմազիէի համբով եւ Արեւելեան Տաւրոսի կիրճերուն մէջէն արշաւել: Այսպէս, կը տեսնենք որ Արմէններ իրենց այս նոր բնակավայրին, այսինքն՝ համահուն երկրին մէջ՝ Տիւ-Գարիմմու (Կիւրիմ) կեդրոնաւ, կրնային ապահով ապրիլ փոխգահան իշխանութեան ներքեւ, որ կ'երեւի թէ իրաց այս վիճակը տեւեր է մինչեւ Փոլիգիոյ քաղաւորութեան անկումը (Ք. Ա. 676 կամ 674-ին):

Մարգոնի որդին ու յաջորդը Սանհերիբ կամ Սենեքերիմ (705—681 Ք. Ա.) պատերազմներ ունեցաւ Դաշտային Կիլիկիոյ մէջ Մանդուարի անուն իշխանի մը հետ, որ տէրն էր Կումրու եւ Սիգու անուն երկու ամրոցներու, որոնցմէ առաջինը կը գտնուէր արգի Մերսինի հիւսիս-արեւմտեան կողմը, իսկ երկրորդը Կիլիկիոյ Հանրածանօթ Սիւ քաղաքն է: Սենեքերիմ նուաճեց Տարսոն մայրաքաղաքն ալ եւ ձերբակալեց ու դերի տարաւ Սանդուարին: Ապա Ք. Ա. 696-ին ճգմեց ապստամբութիւնն ալ Ելուրրու (Համբրոն) բերդի իշխան Կիռնայի. եւ ստոր վրայ ինքզինք բաւական զօրաւոր զգաց Տաւրոս լեռներէն հիւսիս ալ արշաւելու: Սանհերիբ կը զրէ. «եթիւակկիի մարտիկը որ անտառապատ լեռներու վրայ կը բնակին, դէնքերուս ուժովը Հնազանդեցուցի. անոնց քաղաքները քանդեցի, կործանեցի եւ հրոյ ճարակ ըրի: Տիւ-Գարիմմու քաղաքը՝ Տարայի երկրին մէջ՝ նուաճեցի եւ ամր տեղն արօրագրուած գետնի վերածեցի» (Nébi Junus Inscr. 17—19 տողեր): Վերջին նախադասութիւնը սուտ է, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք, այսինքն՝ Ասորեստանի քաղաւորը գուցէ Տիւ-Գարիմմուի առջեւ պարտուած՝ ամօրով վերադարձաւ:

Իսկապէս Սանհերիբի մէկ աղօթքն առ Արեւ աստուած, իր պաշտօնական արձանագրութեան ճիշդ հակառակը կը խօսի. եւ Ֆորրէր անկէ մակարերելով, կը խորհի թէ Ք. Ա. 705 թուականին Մարգոնի դէպի արեւելեան կապաղարովկիա փութալուն առիթ տուող դէպքն էր Արմէն-Փոլիգներու ներարշան իրենց հրամանատար Գուրդիի ներքեւ, որ Խիլակիւս նահանգը (լեռնային Կիլիկիան) կտրած անցած ըլլալով, տեղաւորուեցաւ Տիւ-Գարիմմուի կամ կամմանուի նահանգին մէջ՝ Անտիտարոսի ու Եփրատի մէջտեղ: Այս երկրէն անոնք վճռեցին բնիկները, որոնք դէպի արեւմուտք քաշուելով Միջին Արևելի վրայ՝ իրենց անունով կոչուած Քամմանենէ երկրին մէջ նոր հայրենիք մը գտան: Իսկ կամմանու երկիրն այնուհետեւ Արմենափոլիգներու պատճառաւ Փոքր Հայք (Արմենիա Մինոր) անունը ստացաւ: Այսպէս Ք. Ա. 706 թուականով մենք ճիշդ դարազրուիս մը կը գտնենք Արմէններու Փոքր Հայք ներգաղթին եւ հոն հաստատման:<sup>(2)</sup>

Ֆորրէրը այսպէս խորհելու զրգող եղելութիւնը սա է. — նոր գլուխուած բեւեռապիր արձանագրութեան մը համեմատ, որ, ինչպէս ըսինք առ Արեւ աստուած աղօթք մըն է, Սենեքերիմ Ք. Ա. 695 թուականին, այսինքն՝ իբր թէ Տիւ-Գարիմմուն հիմնայառակ կործանելէն մէկ տարի ետքը, իր զօրավարներէն մէկը կը զրկէ այդ միեւնոյն քաղաքին դէմ, ուր Գուրդի անուն իշխան մը ինքնիրեն համար թաղաւորութիւն մը հիմներ էր,

(1) Քասուհի, «Նախահայկական Հայաստան», էջ 506—510:

N. Adontz, «Histoire d'Arménie», p. 120.

(2) Forrer E., «Die Provinzial-Einteilung des Assyrischen Reiches», p. 81.

որը՝ Ծորբէրի կարծիքով՝ արդէն բուսական տարիներէ ի վեր ալ հոն դոյու-  
թիւն ունէր: «Արդ, քանի որ Գուրգի միեւնոյն է Գորգիոս փոխազական անուան  
հետ», կ'ըսէ Ծորբէր, «մենք հոս ունինք ամենահին նշմարն Արմէններու նե-  
րարչաւին, որ հին ու նոր հեղինակներու միաձայն վկայութեան համեմատ՝  
ծագումով Փոսիդասցոս մէկ շուտաւրդն էին» (ծանօթ. 1, էջ 80): Ըստ Լէյ-  
ման-Հասուպի՝ արձանագրութեան «Գուրգի»ն, Փոսիդիոյ ժամանակակից  
Գորգիոս թագաւորը չըլլալով հանդերձ, Փոսիդիոյ արքայական գերդաստա-  
նին պատկանող իշխան մըն էր: Պատմագէտս թէեւ պատրաստ չէ Ծորբէրի  
հետ ընդունելու թէ Գուրգիի առաջնորդութեան տակ կամմանուն նուաճող  
մարտիկներն անպատճառ Արմէններ էին, բայց եւ այնպէս ինքն ալ արձանա-  
գրական այս տուեալը նշանակելի կը գտնէ Արմէններու ներարչաւին վերա-  
բերմամբ: (1) Ն. Ադոնց ալ միեւնոյն կարծիքէն է: (2)

Ծորբէրի կարծիքը կարեւոր թելադրութիւններ եւ հաւանական իրա-  
կանութիւններ պարունակելով հանդերձ, քանի մը ճշգրտութեանց կը կա-  
րօտի.—

1. Մենք Լէյման-Հասուպի սկզբնական կարծիքնի հետ կ'ընդունինք  
թէ Արմէններ, գտնէ մասամբ, իրբւ Ուրմեթիուի, արդէն Բ. Ա. շուրջ 800  
թուականէն ի վեր բուն կամ Հիւսիսային Փոքր Հայքի, այսինքն Գայլ դետի  
վերին աւազանին մէջ էին: Ասոր կրնանք աւելցնել թէ այդ Արմէնները որ Ա-  
լաու երկրէն աւելի արեւմուտք կը բնակէին, անոնք ալ արդէն Սարգոնի գա-  
հակաւելին առաջ իսկ սկսած էին վերին Ալիւսն անցնել եւ տեղաւորուել Փոքր  
Հայքի այն մասերուն մէջ որ Մելիտինէի աւելի մօտ կը գտնուէին: Բայց նախ  
705-ին Բ. Ա. հիւսիսէն, բուն Փոքր Հայքի կողմէն էր հաւանօրէն որ Ար-  
մէնք, կասկաներուն հետ, դէպի Տարալու երկիրն արշաւեցին, «կուլլու-  
մայի էշպայ» ըսուած հրամանատարին ներքեւ, ու ոչ թէ Գուրգիի: Այս վեր-  
ջինը, մեր կարծիքով, Բ. Ա. 700 թուականէն յետոյ կը յառաջանայ դէպի ար-  
եւելեան կապաղապկիա, ուր արդէն Արմէնները տեղաւայն վրայ էին, բայց  
գանձի Գուրգի կրնար իր բանակին միացնել եւ անոնցմով տիրել կիւրիսի:  
Սա իրականութիւն է որ Սարգոնի մահէն յետոյ կասկաներ բոլորովն կ'անհե-  
տանան Փոքր Ասիոյ հորիզոնէն եւ այնուհետեւ անոնց տեղը կը բռնեն Տարա-  
լունները: Որո՞նք էին որ կասկաները դէպի կովկասիա քշեցին, չենք դիտեր.  
սակայն ինչ ալ ըլլայ ազգակը, ասիկա անպատճառ չի նշանակեր թէ Արմէն-  
ներն ալ քաշուեցան այդ կողմերէն, այլ թէ անոնք այնուհետեւ կը գատուին  
կասկաներէն: Բայց գուցէ չեն յարիր ալ Տարալուններուն, հապա երբ արեւ-  
մուտէն Փոսիդիացիք կը յառաջանան Գուրգիի առաջնորդութեան ներքեւ,  
Արմէններն անոնց կը յարին՝ վազելի յարաբերութեանց բերմամբ:

2. Քամմանեի եւ Մարիմեի տեղանուններուն դէպի արեւմուտք տե-  
ղափոխութիւնն ի՞նչ կը նշանակէ: Եթէ Ծորբէրի ըսածին պէս՝ Արմէններն  
չին Քամմանեի եւ Մարիմեի գաւառներու ժողովուրդները Մարաթիոյ մօ-  
տերէն դէպի հեռաւոր արեւմուտք քշողները, կրնայի՞ն միթէ Արմէններն ուղ-  
ղակի արեւմուտքէն, Խիլակիուի վրայէն եկած ըլլալ. աւելի հաւանական չէ՞  
որ Արմէնները հիւսիսէն հարաւ յարձակելով նախ Եփրատի եզերքները դրա-  
ւեցին, որով կրցան Մարմուտիներն ու Քամմանեիները քշել դէպի Արեւ-

(1) Lehmann-Haupt. Armenien, II, 2. «Nachtrage 4. Birichtigungen», pp. 47-48.

(2) N. Adontz, «Histoire d'Arménie», p. 125, 316, 320.

մուտք: Ուրևմն, Ծորբէրի այս ցուցումն իսկ աւելի կը յարմարի մեր մինչեւ այս տեղ մատնանշածին, թէ Արմէններու բնագուտը Պոնտոսի մէջ էր՝ Փոքր Հայքի անմիջապէս կանակը:

Վերոյիշեալ իրադարձութիւնները մեզի սա զաղափարը կը թելադրեն, թէ այդ դէպքերուն բերմամբ Փոռուզացի երակէն ուժեղ պատուաստ մըն ալ եկած պիտի ըլլայ Արմէններու յայտնայր խաղաղ ժողովուրդի արիւնին վրայ, որով ասոնք — «Թորդոմայ Տունը» — նոր կեանք մը սկսած են նուաճումի եւ ծաւալումի: Ասոնք նաեւ իւրացուցած են երկրին ընդէկ զբաղումը — արտածութեան համար ձիեր եւ ջորիներ բուծանել, նաեւ ձիավարութիւն: Ոնեւ անպատեհութիւն չկայ ընդունելու թէ բարբարոսաց հարստահարութիւններէն փախչող ժողովուրդ մը նոր եւ քաջ առաջնորդներ ստանալով, յանկարծ ինքը սկսի յարձակողական ընթացք մը. բոլոր հանդիսութիւններ ասոր ի դէպ են բան թէ հակառակը: Եւ հարկաւ Արմենափոխուցները կիւրքին տիրանալէն յետոյ՝ անմիջապէս աչք պիտի տնկէին անկէ ոչ հեռու Մելիթու հարուստ շտապատանին վրայ. եւ գայս ալ կ'աւանդին Ամեներիբի ուրիշ մէկ աղօթքէն առ Արեւգ աստուած:

Բայց Մելիթոյ պէս ստանի մը, որ հաթեան քաղաքակրթութեան ամենամեծ կեդրոնը եղած էր, կորուստը հարկաւ շատ ցաւալի պիտի ըլլար Ասորեստանցուց համար, որովհետեւ ան կ'իշխէր այդ միակ յարմար ստորտային վրայ որ Մածաքէն դէպի արեւելք մինչեւ Եփրատ կ'երկարէր, եւ դետն ալ անցնելով Խարբերդի շրջանակին մէջէն մինչեւ Ամիդա եւ վերջապէս Նիւուէ կը հասնէր: Հետեւաբար, կ'երեւի թէ Ասորեստանցիք Կոմմաղինէի վրայէն մեծ ճիւղ մը դնելով Մելիթիան փրկեցին՝ զայն գրաւել ուզող Փոռուզ-Արմէններէն: Այս եղած ըլլալու է Սենեքերիմի իշխանութեան վախճանէն առաջ, որովհետեւ Սենեքերիմի սպանումէն յետոյ՝ Ասարհադոնի եւ իր հայրասպան եղբայրներուն ճիջեւ սպաներազմը Բ. Ա. 681-ին եղած է Խանիզալաստի երկրին մէջ, որ Մելիթինէի նահանգն իսկ է:

Ոմանք կարծեր են թէ Ասարհադոնի եղբայրները Կիմմերեաններէն օժանդակութիւն դանելու յոյսով Խանիզալաստ — Մելիթինէ — դիմեցին. սակայն նորագոյն գիւտերու յոյսով պէտք չէ՞ բայց որ անոնք աւելի հաւանորէն Տիլ-Գարիմուրի Արմենափոխուցներէն օգնութիւն կը սպասէին, որոնք շատ աւելի մօտ էին տեղւոյն. բայց կ'երեւի թէ իրենց այս յոյսն ալ ի դերու ելաւ: Ասարհադոն Միլուի քով ճակատամարտին մէջ յաղթական ելլելէ վերջը՝ իր պարտուած եղբայրները հալածեր է Եփրատն ի վեր մինչեւ Բիզանս կամ Բագանիս, որ ըստ Ռամսէյի, Անի-Կամախի դիմացը կը գտնուէր: Այս դէպքը հարկաւ մեծ աղղարարութիւն մը պիտի ըլլար Արմէններուն, որոնք փորձով կը տեսնէին թէ մեծ քաղաքներ մտնել եւ մանաւանդ Ասորեստանցուց չափազանց մօտենալ վտանգաւոր է իրենց զոյութեան համար: Ուստի իմ կարծիքս այն է թէ Արմէններն Ասարհադոնի արշաւանքի լուրն ստանալուն պէս, թողուցին Մելիթուի մօտ տեղերը եւ լեռնային տեղեր քաշուեցան:

Եւ ազէկ որ այսպէս ըրին. որովհետեւ երբ Ասարհադոն երեք տարի ետքը Բ. Ա. 678-ին Կիմմերիացի Տիուզպայի ճամբայ տուաւ որ Շուսրիայի վրայէն Փոքր Ասիա անցնի իջ հորդայով, անշուշտ իր ծրագիրն էր այս բարբարոսներուն ձեռքով ճզմել Փոռուզացիները, որոնք յամառօրէն դէպի Եփրատ կը յառաջանային: Եւ սպա երբ տեսաւ որ արեւելեան Կասպադովկիոյ Փոռուզիացիք յաջողապէս կը դիմադրեն արշաւող Տիուզպային եւ անոր զինակիցներուն, հետեւեալ տարին Բ. Ա. 677 ինք անձամբ Խրիակիլուի ճամբով արշա-

ևեց Փոքր Ասիա՝ իրը թէ բարբարոսները հալածելու կամ անոնց անցած տեղերու ժողովուրդներուն խլրտումները մարելու պատրուակով, բայց իրապէս Կիմմերիացիները մինչեւ Փոքր Ասիոյ սիրտը սպառնով առաջնորդելու եւ այսպէս Փոխզիտոյ զօրութեան մահացու հարուածը տալու նպատակով (Համա-կողեան, ՄԵԼԻՊ, էջ 25), եւ յաջորդող դէպքերը կը ցուցնեն թէ լու ալ յաջողեցաւ իր այս ծրագիրը:

Խրախուրդի վրայէն Ասարհապոնի ըրած այս աւերիչ արշաւանքին ետեւէն, երբ յաջորդ տարին Ք. Ա. 676 Տրեքներ, Կիմմերիացիք եւ Սապարդացիք միանգամայն արեւմուտքէն, հիւսիսէն ու արեւելքէն խուժեցին Փոխզիտոյ վրայ, վերջապէս խորտակուեցաւ ասոր դիմադրական ոյժը: Յունական աննդուրթիւնը կ'ըսէ թէ երբ Փոխզիտոյ թագաւորը Միդաս Դ. տեսաւ որ ազատում չկար վայրագ բարբարոսներու ձեռքէն, ցուլի արիւն խմելով ինքզինք թունաւորեց ու մեռաւ: Կիմմերիացիք Փոխզիտոյ թագաւորութիւնը կործանելէ յետոյ, ջարդեցին ու վնասեցին ազնուական դասակարգը եւ ստրկութեան դատապարտեցին հասարակ ժողովուրդը:

Ասորեստանցիք Մելիտինէն փրկելու համար Փոխզիտոյ կործանել տուին, բայց չի կարծուիր թէ մեծ բան մը շահեցան: Կ'երեւի թէ Փոխզիտոյ վերապրած ազատանիէն ու զինուորականներէն նշանակելի մաս մը դէպի արեւելք փախչելով՝ Տիլ-Գարիմձուի շրջանակն ապաստանեցաւ: Ըստ Լէյման-Հաուպտի եւ Ն. Ադոնցի՝ Ուրարտուի Ռուսաս Բ. թագաւորին երկու արձանագրութիւնները դրական լոյս կու տան այս մասին: Արծկէի արձանագրութիւնը կը յիշէ այս թագաւորին մէկ ընդհարումը Մուշի, Խաւտէ, Խալիսու, եւ այլ երկիրներէն ժողովուրդներու հետ: Ասիկա պատահած ըլլալու է Ք. Ա. 674-էն ետքը եւ 670-էն առաջ: Լէյման-Հաուպտ այս յիշուած ժողովուրդները կործանուած Փոխզիտոյ թագաւորութիւնէն փախստականներ կը համարի. իսկ ըստ Ն. Ադոնցի, անոնք պարտուած Միդաս Դ. ի բանակին փչրանքն են: Ըստ Լէյման-Հաուպտի՝ Ռուսաս ասոնց հանդիպեցաւ Եփրատի եզերքին վրայ. բայց քերես առիտի հաւանական է Ն. Ադոնցի գաղափարը թէ այդ ընդհարումը եղաւ Եփրատի ու Արծկէի մէջուղի վայր մը, զոր օրինակ՝ Մազկերտի բերդին մօտերը, ինչպէս այս բերդի մէջ Ռուսաս Բ. Կն մնացած սեպագիր արձանագրութիւն մը ենթադրել կու տայ: Բայց ո՛րն ալ ըլլայ, մեծ տարբերութիւն չ'ընէր: Երկու պատմագէտներն ալ կ'ընդունին թէ «Մուշի» բառը հոս Փոխզիտա կը նշանակէ, եւ քիչ մըն ալ այս վերջին անուան ներքեւ Արմէնները միասին կը հասկնան: Ն. Ադոնց որոշ կը համարի թէ այս արշաւանքը Տիլ-Կարիմաուի (Կիւրիսի) կողմէ կու գար եւ թէ արշաւողք արդէն ուրաքտական հող քափանցած էին, իսկ ըստ Լէյման-Հաուպտի՝ քափանցելու կը ջանային: Բայց յամենայն դէպս Ռուսաս Բ. յաջողած է կասեցնել արշաւողներու այս թափանցումը եւ զանոնք ետ քշել Եփրատէն արեւմուտք: Կրնանք ընդունիլ թէ Միդաս Դ. ի այդ պարտուած բանակի մնացորդին մէջ Արմէններն ալ ներկայացուած էին. այնպէս որ Ռուսաս Կն ընդհարման այս դէպքը կրնան նկատել իրրեւ Արմէններու առաջին լուրջ փորձը Եփրատէն արեւելք անցնելու, որ սակայն այս անգամ ձախողեցաւ:

Ի՞նչ եղաւ այս ընդհարման հետեւանքը: Գուցէ Փոխզիտոյ մեծ մասամբ նահանջեցին Ալիւսի աղեղին ներսի կողմը: Խալիտուներ (Հալիդոնք) կ'երեւի թէ դէպի կողիասիա մեկնեցան. բուն Մուշիները (Մասոք) թերեւս տոժամապէս միացան իրենց ցեղակից Տարալուներու հետ. իսկ Խաւտէները՝ այն ժողովուրդին հետ որ ապագային կառաւմացիք անունով ծանօթ պիտի

ըլլար: Գալով Արմէններուն, կ'երեւի թէ կրկնուած դառն փորձառութիւններ անոնց սորվեցուցին թէ ապահովագոյն կերպն էր իրենք իրենց մէջ ամփոփուել եւ բուն Փոքր Հայքի մէջ կեդրոնանալ՝ Երզնկայի ետեւը, Սասաղա եւ այլ վայրեր: Գրեթէ քառորդ դար վերջը, արդէն Հայաստանոց մնացորդին հետ ալ միացած, ուրեմն Հայ-Արմէն ժողովուրդը, աւելի ղիւրին դառաւ Եկեղեցեաց դաւառէն մտնել Ուրարտուի հողերը. քանի որ Երզնկայի դաշտաձև հովիտը բնական դուռ մը կը ներկայացնէ հայկական բարձրաւանդակը մտնելու եւ քանի որ մինչեւ Ն. Ք. 650 թուականը Պալլ-Ուրարտեան պետութիւնն այնչափ տկարացած էր որ չկրցու գիմարել:

\*\*

Ի՞նչ եղաւ Գուրգիի հիմնած Տիլ-Գարիմուռի քաղաքութիւնը: Ն. Արոնց կ'ըսէ թէ Գուրգիի հիմնած այս քաղաքութիւնը վաղանցուկ բան մը չէր, մնայուն էր (Արոնց, «Հայաստանի պատմութիւն», 316—7): Մենք կ'ըսենք թէ անիկա, դոնէ իբրեւ փոխաբան հիմնարկութիւն, մինչեւ Փոխզիտյ պետութեան անկումը միայն, կամ առ առաւելն մինչեւ Ք. Ա. 670 թուականը կրնար շարունակել, որովհետեւ Ասորեստանցոց արձանագրութեանց մէջ, այդ բնակավայրն յիտոյ այլեւ Տարալուներու քաղաքներն կը յիշուին կիրիսի եւ Մալաթիոյ կողմերը:

Այսպէս, Ասորհազոնի վերջին տարիներուն — շուրջ 670—668 — յանկարծ Մուզալլու անուն մէկը իր բանակովը կ'երեւնայ Մելիթիոյ առջեւ, եւ Ասորեստանի ինքնակալը այս պատահարը իր աստուծոյն տեղեկացնել փութալով, անձկանօք կը հարցնէ թէ նինուէէն ճամբայ հանուած բանակը պիտի կրնա՞ր արդեօք Մուզալլուն սոխալել որ Մելիթիոյ պաշարումը վերցնէ: Սակայն կ'երեւի թէ Ասորեստանցիք չյաջողեցան քաղաքը փրկել, որովհետեւ յաջորդ պատգամախօսութեան մէջ «Մելիթիոնցի» տիտղոսը կը տրուի Մուզալլուին: (Օլմութիդ, Ասորիա, 419—20: Վիկլիեր, Բաքիթնիա, էջ 267): Ահա քիչ յետոյ կը դանենք որ Մելիթիոնցի Մուզալլուն զինակցեր է Տարալի թագաւոր Իզալլուին հետ Իշտիարու քաղաքին դէմ, որ հուանօրէն Սերաստիայէն հարաւ արդի Ծախր-Գըշլա տեղով կը ներկայացուի: Սակայն Իզալլու, որ հուանօրէն յունական աւանդութեան մէջ յիշուած Սկոպիտոս արկածախնդիր Սկիւթացի է, չատ չանցած կ'անհետանայ եւ Մուզալլու ինքը «Տարալի թագաւոր» կ'անուանուի՝ երևութապէս առանց Մելիթիոնէն կորսնցնելու: Այս Տարալ բառով հաս անշուշտ Տիլ-Գարիմուռի — կիրիսի — անանգը կ'իմացուի՝ ինչպէս արդէն Սեմեֆրիմի արձանագրութեան մէջ: Մեր տեսութեամբ, այս Մուզալլուի թագաւորութիւնը նշանակելի կերպով բնորոշակ էր, թերեւս Ալիսի սղրերականց հետ բուն Իրիսի սղրերականց դաւառն ալ բովանդակելու չափ: Յիշենք որ Ենոէն շատանց սա կարծիքը յայտնած էր թէ մենք նորէն վաղեմի հայ քաղաք մը տեսնելու ենք Մուզալլուին մէջ, եւ անոր անունն ալ հայերէնով մեկնելու կը անար: Մեր կարծիքով Իզալլուի Սկիւթացի եւ Մուզալլուի Տարալի ըլլալը արդեւք մը չէ որ անոնք իրապէս ժամանակ մը Արմէններու վրայ իշխան ըլլան:

Բայց մի քանի տարի վերջը, տնկէ յետոյ է որ Լիւզիոյ Գիւզէս թագաւորը Ասորեստանի նոր դահակալին՝ Ասորբանիպալի ղեկավարութիւն մը ղըրկած է, այսպէս Ն. Ք. 664-էն յետոյ կամ 660-ի տարիները, կը տեսնենք որ Տարալի եւ Մելիթիոնցի թագաւորը Մուզալլու յանկարծ որոշած է հաշտուել



Նինուէի զեհասպետին հետ, եւ իր զրկած ընծայիմ կամ տարբին մէջ կարեւոր տեղ կը բռնեն կապագովիտայ կամ «Թոգարմայի Տան» նշանոր ձիերը, (Օլմսքիտ, Ասսիրիա, 420) : Ահա այս մասին Ասուրբանիպալի դրածը. «Մուգալու, Տարալի Թագաւորը, որ անմատչելի լեռանց վրայ կը բնակէր եւ իմ Թագաւոր հայրերու դէմ պատերազմներ մղած էր, իր երանքէն սերած իր մէկ դուստրը Նինուէ բերաւ ինծի երկրորդական կին ըլլալու, մեծահարուստ հարսանեկան օժիտով մը, եւ իմ սոքեքս պաղաւ : Ես Մուգալուին պարտագրեցի իրբեւ տարեկան հարկ խոշոր ձիեր զրկեր» : (1)

Ի՞նչ եղաւ Մուգալու Թագաւորին վախճանը. չենք զիտեր : Կ'երեւի թէ անոր մահէն ետք, եթէ ոչ առաջ իսկ, Մալաթիա նորէն Ասորեստանեայց նահանգ դարձաւ, եւ այսպէս շարունակեց մինչեւ Ք. Ա. 620 թուականները : Այս միջոցին Կիմմերեանները Լիւդիայէն արտաքսուած, դէպի արեւելք դարձած էին : Ք. Ա. 650-ին ստեղծեան էր որ Տրերները դատուեցան բուն Կիմմերներէն, որովհետեւ կ'ուզէին ուղղակի դէպի արեւելք դարձել մինչեւ Եփրատի վերին ջուրերը : Բայց Կիմմերներուն Թագաւորը Լիւդիամիս (Ասուր. Տուկրամմի) կ'ուզէր Տաւրոսեան դռներէն դաշտային Կիլիկիա իջնել եւ անկէ արշաւել Սիւրիա, ուր կը յուսար ձոխ աւար գտնել իր հորդաններուն համար :

Բայց դեռ Կիլիկիա չիջած՝ Տաւրոսի կիրճերուն մէջ իր գէմն ելաւ իր զօրքէն խիստ զերազանց Ասորեստանցոց բանակ մը, որուն հետ պատերազմի մէջ սպանուեցաւ Լիւդիամիս (Ն. Ք. 645) : Անոր որդին Սանգախշաւտրա այս պատահարէն վերապրող Կիմմերները Տաւրոսի կիրճերէն ետ հանեց դէպի Փոքր Ասիոյ կեդրոնը : Վերջապէս Կիմմերեանք կամ Գամիրք կ'երեւի քէ աւեմէն աւելի կիզարմացան Ալիւս գետի մեծ աղեղին ներքը՝ այժմու Եագրատի կողմերը : Հաւանօրէն Սանգախշաւտրայի յաջորդն էր Տրերեան Ծաղումով կորոս, որու մասին Սորսերոնի ըրած յիշատակութիւններէն յայտնի է որ աշիկա իր անդուք հարստահարութիւններով մեծ սարսափ մղած է Փոքր Ասիոյ բոլոր կողմերը. որով իր անունը Լենկթիմուրի մը սոսկալի նմանութիւնը կը կրէ հին յունական աւանդութեան մէջ : Բայց վերջապէս Կորոս իր հարստահարութեանց արժանի պատիժը դառաւ :

Տեսանք թէ արդէն Ք. Ա. 670 թուականներուն Սկիւթացի կամ Սակեան բարստարնդիւրներ Թափանցեր էին մինչեւ Փոքր Ասիա եւ հասած մինչեւ Թերմոսոնի հովիտը, որով կ'երեւի թէ հիներ Իտիս կամ Գալլ գետը կը հասկնային : Հոս Կիմմերիացիք եւ Սկիւթացիք պայքարիլ սկսան եւ այնպէս կը թուի թէ ի սկզբան, առաջին ընդհարմանց մէջ, Սկիւթացիք պարտուեցան, մանաւանդ Կիմմեր-Տրերներու Թագաւոր Կորոսէն : Սկիւթացիք Ք. Ա. 620-ի ստեղծեցող ստիպուեցան ետ քաշուիլ ետքէն Փոքր Հայք ըստած երկիրը եւ լուր զրկեցին Իրանի Սկիւթացոց մեծ Թագաւորին Մադիաէսի : Այդ հզօր յաղթականը փութաց իր Փոքր Ասիոյ ցեղակիցներուն օգնութեան. այս անգամ Կիմմերացիք յաղթուեցան Ձելայի քով, եւ Կորոս ալ գերի ինկաւ Մադիաէսի ձեռքը, որ քիչ յետոյ զանի մեռցուց :

Կ'երեւի թէ այս բարստարներուն միջոցին Սկիւթացոց կեդրոնացած վայրն էր Մելիսինէ, եւ զուցէ այս վերելախորամներուն առիթով էր որ ամենահին Մալաթիան կործանեցաւ : Գոնէ պեղումներու փաստը դէպի այս թուականը կը մատնանշէ այդ կործանումը : Ինչ որ է, Կորոսի սպանումէն ետք՝

(1) Rassam Cylinder, Taylor Cylinder, Rev. 22 ff. տողեր 68—74 :

կերպով մը համաձայնութիւն գոյացու մարտնչող երկու բարբարոս ժողովուրդներուն մէջ, ու կիմմերեանք իբրև ճորտեր Սկիւթացւոց՝ միացան անոնց հրոսակային արշաւանքներուն: Մադիւէս արեւմուտքի մէջ իրեն փոխանորդ թողլով Իդանթիւրառա անուն սկիւթացի պետ մը՝ վերադարձաւ արեւելք: Հերոդոտոսի քով պահուած ականդութեան համեմատ՝ միացեալ բարբարոս հորդաներն ապա Իդանթիւրոսի առաջնորդութեամբ՝ Մելիտիմէէ սկսեալ ասպատակեցին Ասորեստանեայց նահանգները մինչև Եգիպտոսի սահմանադրուիլը, ուր հասած կ'երեւին Ք. Ա. 615-ի տեւնները: Իսկ անկէ քսնի մը տարի ետքը Ք. Ա. 612-ին Իինուէ ինկաւ Բաբելոնացւոց ու Մեդացւոց (Մարաց) միացեալ յարձակման առջեւ, որուն հետեւեցաւ Ասորեստանեայց պետութեան կործանումը (Ք. Ա. 607 կամ 606-ին): Իսկ մինչև այն ատեն Հայ-Արմէնք արդէն իրենց զբաւման անցուցած էին Ուրարտուի երկիրներուն մեծադոյն մասը:

Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱԼԱԹԻՈՅ»